Ունենալով իրենց իրավասության տակ այսպիսի տիրույթներ, քուրդ բեկերը դաժան կերպով շահագործում էին քուրդ գյուղացիությանն ընդհանրապես, և հայ գյուղացիությանը մասնավորապես: Բոլոր հայերը քրդերի համար հանդիսանում էին ֆլահներ, այսինքն գյուղացիներ: Քուրդ բեկերը իրենց հիմնական եկամուտները ստանում էին հայերից: Այսպես՝ Շերեֆ Ուդդինը գրում է, որ Հեյդին՝ Զեզիրեի շրջաններից մեկը, ուր հիմնականում ապրել են հայերը, հանդիսացել է Զեզիրեի քուրդ բեկերի եկամուտների աղբյուրը[1]:

Դաժան կերպով շահագործելով գյուղացիությանը, քուրդ բեկերը իրենց ձեռքում կենտրոնացնում էին հսկայական հարստություն: Այսպես՝ Զեզիրեի քուրդ էմիր Մուհամմեդը, 1578 թվականին ունեցել է 12 հազար ոչխար, 100 հազար գլուխ թռչուն[2], իսկ երբ նա մահացել է, նրա գանձարանում հայտնաբերվել է 200 հազար ոսկի դրամ, թանկարժեք մետաքսյա գործվածքներ և այլն: Պալուի քուրդ բեկերն ունեցել են 10 հազար ոչխար: Դա կարող էր ձեռք բերված լինել միայն խստագույն շահագործման միջոցով:

Թուրքական կառավարությունը չէր ուզում անմասն մնալ քուրդ բեկերի կողմից կատարվող շահագործումից: Տեղերում նոր քուրդ կառավարիչներ նշանակելիս, կամ նրանց իրավունքները վերահաստատելիս, կառավարությունը նրանցից պահանջում էր հսկայական գումար, որը կոչվում էր մատուցման հարկ (տակաբուլ, takabul)[3]: Այդ հարկը վճարելու համար քուրդ բեկերը, բնականաբար, ստանկացնում էին տեղի հպատակների, նախ և առաջ հայերի շահագործումը:

---

[1] *B. F, Charmoy,* Chéréf-Nâmeh ou Fastes de la nation Kourde, par Chéréf-Ouddine. prince de Bitlis, tome II, I-ére partie, page 113.

[2] Նույն տեղում, էջ 159:

[3] «*Chéref—Nâmeh*», tome I, *1*-ére p., p· 130.